ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 12.12.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ
ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁԻ
թիվ ՍՑ-LO-2019/217

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի
Քարտուղարությամբ՝ Լ. Անանիկյանի

Պատվիրատու՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայություն
Մասնակից՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝
«ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով գնանշման հարցում, շինարարության նկատմամբ տեխնիկական հսկողության ծառայությունների ձեռքբերում

Պայմանագրի ծածկագիրը՝ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2»

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ին թիվ 26/26-1/19191-2019 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. <u>Գործի նախապատմությունը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության 18.11.2019թ. թիվ 40/11-8288 գրության հիման վրա, 21.11.2019թ.-ին «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 21.11.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 27.11.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 27.11.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 12.12.2019թ.-ին:

2. <u>ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության ներկայացրած փաստերը և դիրքորոշումը.</u>

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 18.11.2019թ.-ին թիվ 40/11-8288 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

«ՀՀ արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 21.12.2018թ. կնքված N ՀՀ ԱՆ ՔԿԵ-ԳՀԾՁԲ-18/15-2 պայմանագրի շրջանակներում «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները, որը հանգեցրել է Պատվիրատուի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, կողմից վերը նշված պայմանագիրը միակողմանի լուծմանը:

Սահմանված կարգի համաձայն, ներկայացվում է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի վերաբերյալ փաստաթղթերը՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով:»:

Ելնելով վերոգրյալից և հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 45-րդ

կետի պահանջները, կից ներկայացրել են «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 27.11.2019թ.-ի Բողոքներ քննող անձին ներկայացրել է տեղեկանք, համաձայն որի հայտնել են.

«ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 2018 թվականի դեկտեմբերի 21-ին կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԾ–ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պայմանագիրը (այսուհետև՝ Պայմանագիր), ըստ որի «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն պարտավորվել էր կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Սևան» քրեակատարողական հիմնարկներում շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություններ իրականացնելու ծառայությունները: Պայմանագրի ընդհանուր գումարը կազմում է 2070000 (երկու միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամ, որը համապատասխան բանկային երաշխիքի՝ որպես կանխավճար, 25.12.2018թ.-ին ամբողջությամբ փոխանցվել «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին: Համաձայն Պայմանագրի 7.1 կետի՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը: Պայմանագրի շրջանակներում ՔԿ ծառայությունը չունի ֆինանսական պարտավորություններ՝ Պայմանագրով նախատեսված ամբողջ գումարը փոխանցվել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի բանկային հաշվեհամարին, ուստի Պայմանագիրը գործում է, քանի դեռ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն ամբողջությամբ չի կատարել Պայմանագրով նախատեսված պարտավորությունները: «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված այն դիրքորոշումը, որ Պայմանագրի գործողության ժամկետը լրացել է՝ անհիմն է:

Պայմանագրի հավելված 1-ով ներկայացված տեխնիկական բնութագրով նշված է, որ կատարողը պետք է իրականացնի տեխնիկական հսկողության ծառայություններ և դրա համար ներկայացնի ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված համապատասխան լիցենզիաներ, որը «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացվել է: Լիցենզիա ունենալու փաստն արդեն իսկ նշանակում է, որ տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից սահմանված իրավական ակտերի համապատասխան: «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված այն դիրքորոշումը, որ Պայմանագրի տեխնիկական բնութագրում հղում չկա ՀՀ քաղաքաշինության նախարարի 1998 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 հրամանի

պահանջներին, որի պատճառով իրենք չեն պահպանել նշված հրամանի պահանջները՝ չի կարող ընդունվել:

ՀՀ ԱՆ Քրեակատարողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 21.12.2018թ. կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ–ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պայմանագրի շրջանակներում «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն խախտել է պայմանագրով նախատեսված պարտավորությունները՝ չի կատարել պայմանագրերով նախատեսված ծառայությունների պատշաճ մատուցումը, որը հանգեցրել է Պատվիրատուի՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայության, կողմից վերը նշված պայմանագրի միակողմանի լուծմանը, ինչը ՔԿ ծառայությունը համարում է լրիվ հիմնավոր:»:

3. <u>«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 21.11.2019թ. գրությամբ դիմել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ. թիվ 26/26-1/19191-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել գրավոր կարծիք:

Մասնակիցը, ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, ներկայանալով նիստերին՝ ներկայացրել է բանավոր դիրքորոշում:

Ներկայացված դիրքորոշմամբ Մասնակիցը հայտնել է, որ պայմանագրով ծառայությունների կատարումը նախատեսված է եղել մինչև 31.08.2019թ.-ին: Ինչպես նաև հավելել է, որ իրենց կողմից կատարվել են պայմանագրով սահմանված՝ իրենց վրա դրված պարտականությունները:

4. <u>ՍՑ-LO-2019/217 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը,</u>

Սույն գործի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի համաձայն՝

ՀՀ ԱՆ Քրեկատարողական ծառայության (այսուհետ՝ Պատվիրատու) և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 21.12.2018թ.-ին կնքվել է թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պետական գնման պայմանագիր (այսուհետ՝ Պայմանագիր):

Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով (այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է Տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Հավելված 1-ով կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.08.2019թ.ը:

Պայմանագրի 8.1 կետի համաձայն՝ Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Հավելված 1-ով սահմանվել է ՔԿ հիմնարկների շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը, պետք է իրականացվի ըստ հավելվածների ծավալների:

www.gnumner.am համացանցային կայքում 18.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ ՀՀ ԱՆ Քրեկատարողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 2019 թվականի դեկտեմբերի 21-ին կնքվել է «ՀՀ ԱՆ ՔԿԵ-ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պայմանագիրը, ըստ որի «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն պարտավորվել էր կատարել ՀՀ ԱՆ «Նուբարաշեն», «Վարդաշեն» և «Սևան» քրեակատարոդական հիմնարկներում շինարարական աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություններ իրականացնելու ծառայությունները:

Պայմանագրով նախատեսված տեխնիկական հսկողության ծառայությունները իրականացվելու էր հետևյալ շինարարական աշխատանքների նկատմամբ.

1. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի սանհանգույցների և լոգարանների վերանորոգման շինարարական աշխատանքներ, ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի ճաշարանի կապիտալ վերանորոգման շինարարական աշխատանքներ, ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքներ (Կապալի պայմանագիր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-18/2/1-1» ծածկագրուի կնքված 25.12,2019թ.-ին, Կապալառու՝ «Արտ Պլաս» ՍՊԸ),

2. ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի արտաքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքներ (Կապալի պայմանագիր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-4-ՀԱՇՁԲ-18/2/1-2» ծածկագրով, կնքվւսծ 25.12.2018թ.-ին, Կապալառու՝ «Վանի» ՍՊԸ):

3. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի արտաքին և ներքին ջրամատակարարման ցանցի, ներքին ջրահեռացման համակարգի կապիտալ վերանորոգման շինարարական աշխատանքներ (Կապալի պայմանագիր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-4-ՀԱՇՁԲ-18/2/1-3» ծածկագրով կնքված 25.12.2016թ.-ին: Կապալառու՝ «Բիդեք» ՍՊԸ),

4. ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի 143 մ երկարությամբ արտաքին պարիսպի կապիտալ կառուցման շինարարական աշխատանքներ (Կապալի պայմանագիր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-16/2/1 - 4 » ծածկագրով, կնքված 25.12.2018թ.-ին, Կապալառու՝ «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ),

5. ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի էլեկտրալուսավորության ցանցերի կապիտալ վերանորոգման աշխատանքներ (Կապալի պայմանագիր «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԱՇՁԲ-18/2/1- 5» ծածկագրով, կնքված 25.12.2018թ.-ին, Կապալառու՝ «Նեմրութ» ՍՊԸ):

Վերը նշված կապալի պայմանագրերով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված էր 2019 թվականի օգոստոսի 31-ին: Սակայն աշխատանքների կատարման բարդությունից ելնելով կնքվել են համաձայնագրեր, ըստ որի աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրով և սահմանվել է 2019 թվականի սեպտեմբերի 30-ին:

Քրեակատարողական հիմնարկներում շինարարական աշխատանքներն իրականացնելու ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ խոչընդոտներ և բարդություններ, որոնց շտկման վերաբերյալ անցկացվել են խորհրդակցություններ, տրվել են բանավոր ցուցումներ աշխատանքները չդադարեցնելու ուղղությամբ, որին զուգահեռ հեղինակային հսկիչը՝ նախագծողը, պետք է նախագծերում կատարել համապատասխան շտկումներ և ուղղումներ: Նախագծերի շտկումները և ուղղումները կատարվել են շինարարության կատարման ընթացքում և վերջնական ավարտվել են 2019 թվականի հոկտեմբերի 3-ին:

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից թույլ են տրվել Պայմանագրով նախատեսված պարտավորությունների ոչ պատշաճ կատարման մի շարք դեպքեր, մասնավորապես.

1.«Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի ճաշարանի կապիտալ վերանորոգման, սանհանգույցների և լոգարանների վերանորոգման շինարարական (աշխատանքներ, որոնց կատարողական ակտերը

տեխնիկական հսկիչը և հեղինակային հսկիչը ստորագրել են, սակայն տեխնիկական հսկիչի՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի, կողմից չի ներկայացրել դրանց վերաբերյալ ամփոփագրերը՝ եզրակացությունները, հիմք՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 1995 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 հրաման: Վերջիններս ներկայացնելու՝ համար «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին տրվել էր բանավոր ցուցում և 4 օրյա ժամկետ, որն նույնպես չի կատարվել:

2. Համաձայն «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանն ուղղված նամակի՝ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի 143 մ երկարությամբ արտաքին պարիսպի կապիտալ կառուցման շինարարական աշխատանքներն ավարտել է, սակայն տեխնիկական հսկիչը՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն, կատարողական ակտերը չի ստորագրել և կատարված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ ամփոփագրեր ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը չի ներկայացրել:

3. «Վանի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի արտաքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքներն ավարտվել են և կատարողական ակտերը տեխնիկական հսկիչի կողմից չեն ստորագրվել: ՀՀ ԱՆ «Սևան» Ն-4 հիմնարկ հարցման արդյունքում պարզվել է, որ տեխնիկական հսկիչը շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածում այցելել է ընդամենը երկու անգամ:

4. Համաձայն «Նեմրութ» ՍՊԸ-ի գրության, իրեն տրամադրված շինհրապարակների ծավալների մասով աշխատանքներն իրականցվել են, սակայն տեխնիկական հսկիչը կատարողական ակտերը չի ստորագրել, իսկ ներկայացված ամփոփագրերը ներկայացրել է թերի:

5. Համաձայն «Բիդեք» ՍՊԸ-ի գրության, իրեն տրամադրված շինհրապարակների ծավալների մասով աշխատանքներն իրականցվել են, սակայն տեխնիկական հսկիչը կատարողական ակտերը չի ստորագրել, իսկ ներկայացված ամփոփագրերը ներկայացրել է թերի:

Միաժամանակ տեղեկացնում ենք, որ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը համապատասխան գրությամբ դիմել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին, պահանջելով Կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տալ մանրակրկիտ հաշվետվության և գրավոր եզրակացություն, սակայն չի ներկայացվել հաշվետվություն, իսկ ի պատասխան գրության ներկայացվել է ոչ լիարժեք տեղեկատվություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2019թ.-ի նոյեմբերի 18-ին միակողմանի լուծում է ԱՆ քրեակատարաողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 21.12.2018թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պայմանագիրը ամբողջ գումարի՝ 2070000 (երկու միլիոն յոթանասուն հազար) ՀՀ դրամի չափով:

18.10.2019թ.-ին Պատվիրատուին ուղղված գրությամբ Մասնակիցը հայտնել է, որ *«Ի պատասխան Ձեր 15.10.2019թ. Ե 4d6-7473 գրության Տեղեկացնում ենք Ձեզ, որ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն իրականացնում է 21 դեկտեմբերի 2018թ.-ին կնքված ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2 ծածկագրով պայմանագրի շրջանակներում ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿ հիմնարկում իրականացվեիք վերանորոգման շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունները, մեր ընկրությունը կատարում է իր պարտավորությունները համաձայն պայմանագրի որի մեջ նշված էր պայմանագրի ավարտը 30.08.2019թ. և մեր ընկերությունը չի շեղվել պայմանագրում նշված տեխնիկական բնութագրից և գնման ժամանակացույցից, իսկ շինարարական աշխատանքները Ձեր գրության մեջ նշված ժամկետում ավարտված չեն եղել և չեն ունեցել փոփոխված նախագիծ որի հիման վրա մենք կարողանայինք ստուգել կատարված աշխատանքների ծավալները, որի մասին տեղյակ են եղել Քրեակատարողուսկան ծառայության պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցները: Շինարարական աշխատանքները մասամբ ավարտվել են Նուբարաշեն ՔԿ հիմնարկում Քրեակատարողական ծառայության կողմից տրամադրված շինհրապարակներում:*

Քանի որ շինարարական աշխատանքները մեկնարկելիս տեղում շին հրապարակները ուսումնասիրելուց հետո պարզ դարձավ որ նախագիծը մշակվել է առանց տեղում փաստացի ուսումնասիրությունների և չափագրությունների այդ իսկ պատճառով աշխատանքային ծավալները չեն համապատասխանում իրականում կատարվելիք շինարարական աշխատանքներին, Քրեակատարողական ծառայության կողմից շինարարության պատասխանատու ստորաբաժանման աշխատակիցներին բանավոր կերպով տեղեկացրել ենք, որ պետք է կատարել նոր չափագրություն և տրամադրել նախագիծ որպեսզի ենթադրելով և տեղի աշխատակիցներին հարցնելով չկատարվի շինարարական աշխատանքները, 2019թ. հունվար ամսին: Նրանք բազմիցս եղել են շինհրապարակում և ոչ մի բան չեն ձեռնարկել այն կարգավորելու համար միայն երեք շինարարական ընկերություններին պարտադրել են շարունակել շինարարական

աշխատանքները ասելով՝ դուք կառուցեք մեր ցուցումներով մենք կհանձնարարենք նախագծային Ընկերությանը նախագիծը կհամապատասխանացնի ձեր կատարած շինարարական աշխատանքներին: «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին փոփոխված նախագիծը քրեակատարողական ծառայությունը տրամադրել է 03.10.2019թ-ին, իսկ շինարարական աշխատանքների ավարտը համաձայն պայմանագրի նախատեսված է եղել 30.08.2019թ.-ին, փաստացի տեղում տրամադրված շինհրապարակներում շինարարական աշխատանքները «ԲԻԴԵՔ» ՍՊԸ-ն և «ԱՐՏ ՊԼԱՍ» ՍՊԸ-ն ավարտել են 30.09.2019թ.-ին, իսկ «ՆԵՄՐՈԻԹ» ՍՊԸ-ն ավարտել է 08.10.2019թ.-ին:

«Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն համաձայն տրամադրված փոփոխված նախագծի իրականացրել է տեղում կատարված շինարարական աշխատանքների փաստացի ծավալների չափագրություն և ֆիքսել է կատարված աշխատանքների ավարտուն տեսքը լուսանկարներով 05.10.2019թ. դրությամբ, քանի որ ՀՀ ԱՆ Նուբարաշեն ՔԿ հիմնարկը փաստացի շահագործվում է, իսկ շինհրապարակները տրամադրվել են ոչ ճիշտ՝ մասնավորապես փոխարինվել է 2-րդ հարկի կոյուղու կանգնակները և ջրի խողովակները, իսկ 1-ին հարկում և 3-րդ հարկում մնացել են հին խողովակները տարբեր տրամաչափերի, որի արդյունքում վերևի և ներքևի հարկերում անդադար կեղտաջրերի հոսքեր են լինում վերանորոգված խցեր և հարակից միջանցքեր՝ արդյունքում վնասվում է կատարված աշխատանքները:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզեցինք որ փոփոխված նախագիծը չի համապատասխանում տեղում կատարված շինարարական աշխատանքներին և ՀՀ-ում գործող շինարարական նորմերին ու կանոններին:

Նաև տեղեկացնում ենք Ձեզ որ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿՀ 143 մ երկարությամբ արտաքին պարիսպի կապիտալ կառուցման շինարարական աշխատանքներում նկատվել են թերություններ և տրվել է ցուցումներ շինարարությունը իրականացնող ընկերությանը որպեսզի վերացնի հայտնաբերված թերությունները սեղմ ժամկետներում, իսկ ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի արտաքին ջրահեռացման ցանցի վերակառուցման շինարարական աշխատանքներ գտնվում են ավարտական փուլում:

28.06.2019թ.-ին Քրեակատարողական ծառայություն ներկայացվել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ և հանձնման ընդունման արձանագրությունը, որի արդյունքում չի կատարվել վճարում առ այսօր:»:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ին թիվ 26/26-1/19191-2019 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման, հետևյալ պատճառաբանությամբ.

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ նաև Օրենսգիրք) 347-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 352-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը նախատեսում է կամ հնարավորություն է ընձեռում որոշել դրա օրը կամ ժամանակահատվածը, ապա պարտավորությունը պետք է կատարվի այդ օրը կամ այդ ժամանակահատվածի ցանկացած պահին:

2. Այն դեպքերում, երբ պարտավորությունը կատարման ժամկետ չի նախատեսում և ժամկետի որոշման պայմաններ չի պարունակում, այն պետք է կատարվի պարտավորության ծագումից հետո՝ ողջամիտ ժամկետում:

3. Ողջամիտ ժամկետում չկատարված պարտավորությունը, ինչպես նաև այն պարտավորությունը, որի կատարման ժամկետը որոշվում է պահանջի պահով, պարտապանը պարտավոր է կատարել այդ մասին պարտատիրոջ պահանջի ներկայացման օրվանից հետո՝ յոթնօրյա ժամկետում, եթե պարտավորության կատարման այլ ժամկետ չի բխում օրենքից, այլ իրավական ակտերից, պարտավորության պայմաններից, գործարար շրջանառության սովորույթներից կամ պարտավորության էությունից:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը:

Օրենսգրքի 417-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ պարտապանը պարտավորությունը չկատարելու և (կամ) անպատշաճ կատարելու համար պատասխանատու է մեղքի առկայության դեպքում, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով կամ պայմանագրով: Պարտապանը ճանաչվում է անմեղ, եթե ապացուցում է, որ ինքը պարտավորությունը պատշաճ կատարելու համար ձեռնարկել է իրենից կախված բոլոր միջոցները:

Օրենսգրքի 420-րդ հոդվածի համաձայն՝

1. Եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, ապա դատարանը համապատասխանաբար նվազեցնում է պարտապանի պատասխանատվության չափը: Դատարանն իրավունք ունի նաև նվազեցնել պարտապանի պատասխանատվության չափը, եթե պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար:

2. Սույն հոդվածի 1-ին կետի կանոնները համապատասխանաբար կիրառվում են նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Օրենսգրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված:

Պայմանագրի 1.1 կետի համաձայն՝ Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողության ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

Պայմանագրի 1.2 կետի համաձայն՝ Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

Վերոնշյալ հոդվածների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ օրենսդիրն որպես պարտավորությունը խախտելու համար պատասխանատվության պարտադիր պայման սահմանել է պարտավորությունը խախտած անձի մեղքի առկայությունը: Պարտապանը պարտավորությունը անպատշաճ կատարելու համար չի կարող կրել պատասխանատվություն՝ մեղքի բացակայության պայմաններում: Ուստի, այն դեպքերում, երբ պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը խախտելու մեջ բացակայում է պարտապանի մեղավորությունը, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել մասնակցի (պարտապանի)՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ավելին, եթե պարտավորությունը չկատարելը կամ այն անպատշաճ կատարելը տեղի է ունեցել երկու կողմերի մեղքով, պարտապանի պատասխանատվության չափը պետք է նվազեցվի, ինչպես նաև այն դեպքերում, երբ պարտատերը դիտավորյալ կամ անզգույշ նպաստել է պարտավորությունները չկատարելու կամ անպատշաճ կատարելու հետևանքով պատճառված վնասների չափի ավելացմանը կամ ողջամիտ միջոցներ չի ձեռնարկել դրանց նվազեցման համար, ընդ որում, նաև այն դեպքերում, երբ պարտապանը, անկախ իր մեղքից, օրենքի կամ պայմանագրի ուժով պատասխանատվություն է կրում պարտավորությունը չկատարելու կամ անպատշաճ կատարելու համար:

Վերոգրյալ իրավանորմերի համալիր վերլուծությունը՝ գործով հաստատված փաստերի գնահատմամբ, թույլ է տալիս եզրակացնել հետևյալը.

ՀՀ ԱՆ Քրեկատարողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 21.12.2018թ.-ին կնքված թիվ «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պետական գնման Պայմանագրի հավելված 1-ով տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով

(այսուհետ՝ Հավելված 1) սահմանվել է Տեխնիկական հսկողության ծառայությունների կատարման ժամկետները, ծավալները և հասցեն:

Հավելված 1-ով կատարման ժամկետ է սահմանվել Պայմանագրի կնքման օրվանից մինչև 31.08.2019թ.:

Հավելված 1-ով սահմանվել է ՔԿ հիմնարկների շինարարական աշխատանքների տեխնիկական հսկողությունը, պետք է իրականացվի ըստ հավելվածների ծավալների:

www.gnumner.am համացանցային կայքում 18.11.2019թ.-ին հրապարակված պայմանագրի միակողմանի լուծման մասին ծանուցման համաձայն՝ Պատվիրատուն արձանագրել է Մասնակցի կողմից թույլ տրված հետևյալ խախտումները.

1. «Արտ Պլաս» ՍՊԸ-ի կողմից իրականացվել են ՀՀ ԱՆ «Նուբարաշեն» ՔԿ հիմնարկի ճաշարանի կապիտալ վերանորոգման, սանհանգույցների և լոգարանների վերանորոգման շինարարական (աշխատանքներ, որոնց կատարողական ակտերը տեխնիկական հսկիչը և հեղինակային հսկիչը ստորագրել են, սակայն տեխնիկական հսկիչի՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի, կողմից չի ներկայացրել դրանց վերաբերյալ ամփոփագրերը՝ եզրակացությունները, հիմք՝ ՀՀ քաղաքաշինության նախարարի 1995 թվականի ապրիլի 28-ի թիվ 44 հրաման: Վերջիններս ներկայացնելու՝ համար «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին տրվել էր բանավոր ցուցում և 4 օրյա ժամկետ, որն նույնպես չի կատարվել:

2. Համաձայն «Հ.Կ.Շ.Ի.Կ.» ՓԲԸ-ի կողմից ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանն ուղղված նամակի՝ ՀՀ ԱՆ «Վարդաշեն» ՔԿ հիմնարկի 143 մ երկարությամբ արտաքին պարիսպի կապիտալ կառուցման շինարարական աշխատանքներն-ավարտել է, սակայն տեխնիկական հսկիչը՝ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ն, կատարողական ակտերը չի ստորագրել և կատարված աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ ամփոփագրեր ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությանը չի ներկայացրել:

3. «Վանի» ՍՊԸ-ի կողմից ՀՀ ԱՆ «Սևան» ՔԿ հիմնարկի արտաքին ջրահեռացման ցանցերի վերակառուցման շինարարական աշխատանքներն ավարտվել են և կատարողական ակտերը տեխնիկական հսկիչի կողմից չեն ստորագրվել: ՀՀ ԱՆ «Սևան» Ն-4 հիմնարկ հարցման արդյունքում պարզվել է, որ տեխնիկական հսկիչը շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածում այցելել է ընդամենը երկու անգամ:

4. Համաձայն «Նեմրութ» ՍՊԸ-ի գրության, իրեն տրամադրված շինհրապարակների ծավալների մասով աշխատանքներն իրականցվել են, սակայն

տեխնիկական հսկիչը կատարողական ակտերը չի ստորագրել, իսկ ներկայացված ամփոփագրերը ներկայացրել է թերի:

5. Համաձայն «Բիդեք» ՍՊԸ-ի գրության, իրեն տրամադրված շինհրապարակների ծավալների մասով աշխատանքներն իրականացվել են, սակայն տեխնիկական հսկիչը կատարողական ակտերը չի ստորագրել, իսկ ներկայացված ամփոփագրերը ներկայացրել է թերի:

ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը համապատասխան գրությամբ դիմել է «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին, պահանջելով Կապալառու կազմակերպությունների կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ տալ մանրակրկիտ հաշվետվության և գրավոր եզրակացություն, սակայն չի ներկայացվել հաշվետվություն, իսկ ի պատասխան գրության ներկայացվել է ոչ լիարժեք տեղեկատվություն:

Հաշվի առնելով վերոգրյալը և հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.3 կետը՝ ՀՀ ԱՆ քրեակատարողական ծառայությունը 2019թ. նոյեմբերի 18-ին միակողմանի լուծել է ԱՆ քրեակատարաողական ծառայության և «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ի միջև 21.12.2018թ.-ին կնքված «ՀՀ ԱՆ ՔԿԾ-ԳՀԾՁԲ-18/15-2» ծածկագրով պայմանագիրը:

Ծանուցմամբ Պատվիրատուն հայտնել է նաև, որ վերը նշված կապալի պայմանագրերով նախատեսված շինարարական աշխատանքների կատարման վերջնաժամկետը սահմանված էր 2019 թվականի օգոստոսի 31-ին: Սակայն աշխատանքների կատարման բարդությունից ելնելով կնքվել են համաձայնագրեր, ըստ որի աշխատանքների կատարման վերջնաժամկետը երկարաձգվել է 30 օրով և սահմանվել է 2019 թվականի սեպտեմբերի 30-ին:

Քրեակատարողական հիմնարկներում շինարարական աշխատանքներն իրականացնելու ընթացքում ի հայտ են եկել բազմաթիվ խոչընդոտներ և բարդություններ, որոնց շտկման վերաբերյալ անցկացվել են խորհրդակցություններ, տրվել են բանավոր ցուցումներ աշխատանքները չդադարեցնելու ուղղությամբ, որին զուգահեռ հեղինակային հսկիչը՝ նախագծողը, պետք է նախագծերում կատարել համապատասխան շտկումներ և ուղղումներ: Նախագծերի շտկումները և ուղղումները կատարվել են շինարարության կատարման ընթացքում և վերջնական ավարտվել են 2019 թվականի հոկտեմբերի 3-ին:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձը հարկ է համարում փաստել, որ Պատվիրատուն Մասնակցի տվյալները ուղարկել է ոչ լիարժեք: Չի ներկայացվել Նախագծերի շտկումները և ուղղումները, որոնք կատարվել են

շինարարության կատարման ընթացքում և վերջնական ավարտվել են 2019 թվականի հոկտեմբերի 3-ին: Իսկ գործում առկա փաստերով չի հիմնավորվում Պատվիրատուի Պայմանագիրը մասնակի լուծելու ծանուցմամբ նշված փաստերը, որն էլ հնարավորություն չի տալիս Բողոքներ քննող անձին լիարժեք գնահատելու և ապա արձանագրելու մասնակից կողմից Օրենքի խախտման փաստը, որպիսի պայմաններում նախաձեռնված ընթացակարգն ենթակա է մերժման:

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ … մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը.

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4 ի թիվ 526 Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ կետի 16-րդ ենթակետի համաձայն՝ պայմանագիր կնքած անձի կողմից ստանձնած Պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է տեղեկագրում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Պայմանագիր կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ

կետի «ա» ենթակետում նշված պատասխանատվությունը չի կարող վրա հասնել ու հանգեցնել Մասնակցին՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելուն:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը.

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 21.11.2019թ.-ի թիվ 26/26-1/19191-2019 գրությամբ «Նյու Ինդասթրիզ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված թիվ ՍՑ-ԼՕ-2019/217 ծածկագրով ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ
ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**